ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **13/06/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Արմենակ Միրզախանյանը, Անահիտ Պետրոսյանը, Անահիտ Գեվորգյանը, Սաշա Ստեփանյանը, Անի Հարությունյանը, Գրիշա Բաբայանը, Լուսինե Բաբայանը, Հայկ Հակոբյանը, Հասմիկ Ազոյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Դավիթ Այվազյանը, Նարա Հովհաննիսյանը, Վարդան Մանուչարյանը, Նարեկ Հովսեփյանը, Երվանդ Եղիազարյանը, Արմեն Խաչատրյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հովսեփ Առաքելյանը

Նիստն արձանագրում էր բարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ, աշխատակազմի քարտուղարին փոխարինող՝ Հրանտ Արշակյանը

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2025 թվականի հունիսի 13-ի հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 124-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին.
3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին.
5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը հաստատելու մասին.
6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Դարբաս բնակավայրում գտնվող հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին.
7) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով մրցույթով տրամադրելու մասին.
8) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.
9) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 061-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 124-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 124-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և որոշման 1-ին կետի հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-ից 3 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դ. Այվազյանը մանրամասն ներկայացրեց բյուջեում կատարվող փոփոխությունները:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 062-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու նկատի ունենալով Սիսիան համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 03-ի թիվ 531-Ա որոշումը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Սիսիան համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել լրացումներ և գույքացանկ ներառել 32143878 /երեսուներկու միլիոն մեկ հարյուր քառասուներեք հազար ութ հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով գույքը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը ներկայացրեց գույքագրման փաստաթղթերում կատարվող լրացումները: Համայնքի ղեկավար Հ. Առաքելյանը հավելեց, որ ավագանու նիստերը հեռարձակվում են նոր սարքավորումներով և լավ որակով:
Որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 063-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով ու 34-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 16-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

   1) որոշման թիվ 1 հավելվածը լրացնել 54, 55, 56, 57, 58 տողերով՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակիցների թվաքանակ	Հաստիքային միավորի քանակ	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի

	Գորայք բնակավայր, 1 խումբ				
54	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0,5	124200	62100
55	Դաստիարակ	2	0,56	119808	134185
56	Խոհարար	1	0,5	108000	54000
57	Դաստիարակի օգնական	1	1	112000	112000
58	Բուժքույր	1	0,5	108000	54000

2) որոշման թիվ 3 հավելվածը լրացնել 43, 44, 45, 46, 47 տողերով՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակիցների թվաքանակ	Հաստիքային միավորի քանակ	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի
	Սալվարդ բնակավայր, 1 խումբ				
43	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0,5	124200	62100
44	Դաստիարակ	2	0,56	119808	134185
45	Խոհարար	1	0,5	108000	54000
46	Դաստիարակի օգնական	1	1	112000	112000
47	Բուժքույր	1	0,5	108000	54000

3) որոշման թիվ 6 հավելվածի 24-րդ տողի «Հաստիքային միավոր» սյունակի «12» թիվը փոխարինել «11.5» թվով, «Աշխատակիցների թվաքանակ» սյունակի «24» թիվը փոխարինել «23» թվով, «Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի» սյունակի «1296000» թիվը փոխարինել «1242000» թվով, և հավելվածը լրացնել «43» տողով՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակիցների թվաքանակ	Հաստիքային միավորի քանակ	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի
43	Մշակույթային գործունեություն իրականացնող մասնագետ /Ույծ բնակավայր/	1	0,5	108000	54000

4) որոշման թիվ 7 հավելվածի 17-րդ տողի «Հաստիքային միավորի քանակը» սյունակի «0.5» թիվը փոխարինել «1» թվով, «Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի» սյունակի «54000» թիվը փոխարինել «108000» թվով,

5) որոշման թիվ 8 հավելվածի՝

ա/ 8-րդ տողի «Հաստիքային միավորի քանակը» սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով, «Աշխատակիցների թվաքանակ» սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով, «Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի» սյունակի «118000» թիվը փոխարինել «236000» թվով,

բ/ 17-րդ տողի «Հաստիքային միավորի քանակը» սյունակի «0.5» թիվը փոխարինել «1» թվով, «Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի» սյունակի «59000» թիվը փոխարինել «118000» թվով,

գ) հավելվածը լրացնել 42, 43, 44 տողերով՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակիցների թվաքանակ	Հաստիքային միավորի քանակ	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի
42	Ազգային նվագարաններ խմբակավար	1	1	118000	118000
43	Երգի և երաժշտության խմբակավար	1	1	118000	118000
44	Ձեռագործության խմբակավար	1	1	118000	118000

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Դ. Այվազյանը զեկուցեց, որ հաստիքացուցակներում փոփոխություններ և լրացումներ կատարվել է հիմք ընդունելով ՀՈԱԿ-ի տնօրենների զեկուցագրերը: Համայնքի ղեկավարը հավելեց, որ Գորայք և Սալվարդ բնակավայրերում բացվել են մանկապարտեզներ: Դաշնամուր լարողի հաստիք է ավելացել, որը մեր ժամանակներում հազվագյուտ մասնագիտություն է:
Որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 064-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 11-րդ հոդվածով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2025թ.-ի բյուջեում հատկացնել 30 000 000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2025թ.-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար որպես առաջնահերթություն սահմանվում են համայնքի հասարակական վայրերի բարեկարգումը:
3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն համայնքի 16 տարին լրացած բնակիչները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ, արհեստակցական միություններ, մասնագիտական ասոցիացիաներ, մեդիա խմբեր, հիմնադրամներ և քաղաքացիների այլ խմբեր):
4. Համայնքի ղեկավարին՝
   1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
   2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հավանությանը.

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Ե. Եղիազարյանը ներկայացրեց, որ Կառավարության կողմից ներկայացվող ծարգիր է: Սուբվենցիաներից տարբերվում է նրանում, որ սուբվենցիոն ծրագրերը որոշում է ավագանին և համայնքի ղեկավարը, իսկ այս դեպքում ծրագիրը առաջարկում է բնակչությունը: Կազմակերպվելու է քվեարկություն, որին պետք է մասնակցի բնակչության 1 տոկոսը: Անցյալ տարի 12 համայնքներում է իրականացվել: Առաջին տարում ֆինանսավորումը ամբողջությամբ կատարվում է համայնքի բյուջեից, երկրորդ տարում ծրագրի ֆինանսավորումը իրականացվում է՝ 50 տոկոս համայնքի կողմից, 50 տոկոս կառավարության:
Եղան հարց ու պատասխաններ և հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 065-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.4 հոդվածի դրույթներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը (2025-2029թթ.)՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Մանուչարյանը զեկուցեց, որ վերջին երեք տարվա աղբահանության կատարված թվերի մոնիտորինգ է կատարվել և դրա հիման վրա կազվել է պլանը: Ավելացրեց նաև, որ նոր աղբավայր ունենալու համար տարածք են ուսումնասիրել, դեռ վերջնական եզրակացության չեն հանգել: Այս պահին առաջնահերթ խնդիր է նոր աղբավայր ունենալ և աղբը տեսակավորել: Հրազդան քաղաքում տեղի է ունեցել բացումը, նույն մակարդակի էլ ձգտում են մեզ մոտ լինի:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 066-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԲԱՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի

մարզպետ Ռ. Ղուկասյանի 2024 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 01/16/08542-2024 գրությունն ու համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Դարբաս բնակավայր 1-ին փողոց թիվ 1/2 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,07942հա հողամասը (ծածկ.՝ 09-031-0012-0021) առողջության առաջնային պահպանման նոր շենքի (ամբուլատորիա) կառուցման համար նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:
2. Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Մանուչարյանը զեկուցեց, որ Սիսիան համայնքի Գորայք և Դարբաս բնակավայրերում նախատեսվում է իրականացնել նոր ամբուլատորիաների կառուցում, անհրաժեշտ է Դարբաս բնակավայրում գտնվող նախապես ընտրված 0,07942հա հողամասը նվիրաբերել ՀՀ-ին: Գորայք բնակավայրի հողակտորը արդեն ՀՀ-ին է պատկանում, իսկ Դարբասինը՝ համայնքային սեփականություն է: Ամբուլատորիաների նախագիծը մոտ է բուժկետին, հարմարեցված է բոլոր կոմունիկացիաներին և բնակչությանը:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 067-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48[1]-րդ, 60-րդ, 74-րդ և 76-րդ հոդվածների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. 2025թ. թվականի երկրորդ կիսամյակում բաց մրցույթով, կառուցապատման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Սառնակունք բնակավայր թիվ 1 հասցեում գտնվող Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների 12,9հա հողամասը (վկ. 30052025-09-0041, ծածկ. 09-081-0102-0229)՝ արևային կայանի կառուցման նպատակով, 25 տարի ժամկետով, 1հա հողամասի վարձավճարը տարեկան 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:
2. Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Մանուչարյանը ներկայացրեց, որ նախորդ նիստում հողամասի նպատակային նշանակությունն են փոխել, իսկ այժմ մրցույթով տրամադրվելու է արևային կայանի կառուցման համար: Հարցը

քննարկվել է, թե ի՞նչ եղանակով պետք է տրվի, քանի՞ տարի ժամկետով, վարձավճարը ինչքան: Հողամասը մնալու է համայնքային սեփականություն, տրվելու է 25 տարի ժամկետով, հողի հարկի դրույքաչափը մոտ 90000 է կազմում, համայնքի ղեկավարի առաջարկով որոշվել է 1հա հողամասի վարձավճարը տարեկան 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամով տրամադրել:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 068-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48[1]-րդ, 57-րդ, 60-րդ, 76-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 և 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896 որոշումների պահանջների և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողամասերը առանց մրցույթի 1(մեկ) տարի ժամկետով օգտագործման տրամադրել կառուցապատման իրավունքով բացառապես ոչ հիմնական շինություն՝ մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատ (սուրճի, գազավորված ըմպելիքների և այլ սննդամթերքի) սարքեր կամ վճարային տերմինալներ, ավտոմատացված համակարգեր տեղադրելու նպատակով:
2. Սահմանել տարեկան վարձավճար
   1) Սիսիան քաղաքում՝
      ա. սուրճի ապարատների տեղադրման համար՝ 36000 ՀՀ դրամ,
      բ. վճարային տերմինալների տեղադրման համար՝ 45000 ՀՀ դրամ.
   2) բնակավայրերի վարչական տարածքում՝
      ա. սուրճի ապարատների տեղադրման համար՝ 30000 ՀՀ դրամ.
      բ. վճարային տերմինալների տեղադրման համար՝ 40000 ՀՀ դրամ:
3. Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քաղաքաշինության բաժնի պետ Վ. Մանուչարյանը ներկայացրեց, որ բնակիչներից ստացվել է դիմում-խնդրանքներ սուրճի ապարատների և տերմինալների տեղադրման թույլտվությունների ստացման համար, ուստի ավագանու քննարկման է ներկայացվում այսպիսի ապարատների թույլտվության ժամկետների և վարձավճարների չափը սահմանելու առաջարկ: Ավելացրեց նաև, Սիսիան համայնքում նոր են կիրառում և այնպիսի գին են սահմանել, որ տվյալ բիզնեսով զբաղվողների համար հարմար լինի: Ուսումնասիրել են նաև մոտակա համայնքների գնացուցակները, և որոշվել է մեր համայնքում սահմանել նշված գները:
Երկար քննարկումից հետո նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 069-Ա)*

Ավագանու անդամ Ա. Սուլեյմանյանը քվեարկեց ձեռնպահ:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՐԱՆՏ ԱՐՇԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 070-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՐԱՅԻԿ ՍՈՒԼԵՅՄԱՆՅԱՆ

ՄԻՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Հրանտ Արշակյանը
_____